

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ (ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ՀԱՍՏԱՏՄԱՆ)) ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ՀԱՍՏԱՏՄԱՆ) ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ (ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ) ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

(Սանկտ Պետերբուրգ, 2009 թվականի դեկտեմբերի 11)

Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության (այսուհետ՝ Մաքսային միություն) անդամ պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Կողմերը,

հիմնվելով 2000 թվականի հոկտեմբերի 10-ի «Եվրասիական տնտեսական համայնք հիմնելու մասին» պայմանագրի վրա,

հիմնվելով ապրանքների ազատ տեղաշարժը ապահովող միասնական սկզբունքների վրա,

նպատակ հետապնդելով խորացնել Եվրասիական տնտեսական համայնքում ինտեգրացիոն գործընթացները եւ ստեղծել մաքսային միություն,

ընդունելով հավաստագրման ոլորտում միասնական քաղաքականության իրականացման նպատակահարմարությունը,

առաջնորդվելով 2008 թվականի հունվարի 25-ի «Տեխնիկական կարգավորման, սանիտարիայի եւ բուսասանիտարիայի ոլորտում համաձայնեցված քաղաքականություն վարելու մասին» համաձայնագրով,

հաշվի առնելով «Առետրում տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագրի եւ «Առետրի համաշխարհային կազմակերպության սանիտարիայի եւ բուսասանիտարիայի միջոցների կիրառման մասին» համաձայնագրի կանոնները եւ սկզբունքները, որոնք ընդունվել են 1994 թվականի ապրիլի 15-ին Մարաքեշում տեղի ունեցած բազմակողմ տնտեսական բանակցությունների Ուրուգվայի փուլում,

համաձայնեցին հետեւյալի մասին՝

Հոդված 1

Սույն Համաձայնագրում հատուկ չսահմանված հասկացությունները կիրառվում են «Տեխնիկական կարգավորման, սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումների

ոլորտում համաձայնեցված քաղաքականության իրականացման մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրով սահմանված իմաստով:

Սույն Համաձայնագրի նպատակներով հավաստագրման ազգային համակարգ նշանակում է Կողմ հանդիսացող պետության կողմից հաստատված հավաստագրման համակարգերի կանոնների, ընթացակարգերի եւ դրանց մասնակիցների ամբողջությունը:

Հոդված 2

Կողմերը փոխադարձ ճանաչում են սերտիֆիկացման (համապատասխանության գնահատման (հաստատման)) մարմինների եւ համապատասխանության գնահատման (հաստատման) աշխատանքներ կատարող փորձագիտական լաբորատորիաների (կենտրոնների) հավաստագրումը Կողմ հանդիսացող պետության ազգային հավաստագրման համակարգերի շրջանակում, եթե պահպանվել են հետեւյալ պայմանները՝

Կողմ հանդիսացող պետություններում գործում է հավաստագրման ազգային համակարգ, որտեղ կիրառվում են միջազգային չափորոշիչների պահանջներին համապատասխան հավաստագրում կատարելու համար անհրաժեշտ կանոններ եւ ընթացակարգեր,

Կողմ հանդիսացող պետության հավաստագրման մարմինները կատարում են փոխադարձ համեմատական գնահատումներ՝ նպատակ հետապնդելով ձեռք բերել կիրառվող ընթացակարգերի համազորություն,

հավաստագրումը իրականացվում է հետեւյալ սկզբունքների հիման վրա՝

կամավորություն,

հավաստագրման կանոնների թափանցիկություն եւ հասանելիություն,

հավաստագրում իրականացնող մարմինների մասնագիտական որակավորում եւ անկախություն,

հավաստագրման հավակնող հայտատուների համար հավասար պայմանների ապահովում,

հավաստագրման եւ համապատասխանության գնահատման գործողությունները միաժամանակ կատարելու անթույլատրելիություն:

Հոդված 3

Կողմ հանդիսացող պետությունների հավաստագրման գծով մարմինները՝

վարում են հավաստագրված սերտիֆիկացման (համապատասխանության գնահատման (հաստատման)) մարմինների եւ համապատասխանության գնահատման աշխատանքներ վարող փորձագիտական լաբորատորիաների (կենտրոնների) ռեգիստրներ՝ հավաստագրման ազգային համակարգերի շրջանակում,

Եվրասիական տնտեսական համայնքի տեղեկատվական համակարգ են ներկայացնում տվյալներ եւ փաստաթղթեր, որոնք վերաբերում են հավաստագրմանը եւ նախատեսված են «Տեխնիկական կարգավորման, սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումների ոլորտում համաձայնեցված քաղաքականության իրականացման մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի համաձայնագրով,

Կողմ հանդիսացող պետությունների հավաստագրման մարմինների ներկայացուցիչներին հնարավորություն են տալիս կատարել փոխադարձաբար համեմատելի գնահատումներ՝ նպատակ հետապնդելով ձեռք բերել կիրառվող գործընթացների համազորություն,

քննարկում եւ որոշումներ են ընդունում բողոքների եւ պահանջների վերաբերյալ, որոնք Կողմ հանդիսացող պետությունների կողմից հավաստագրված՝ սերտիֆիկացման (գնահատման(հաստատման)) մարմինները եւ համապատասխանության գնահատման (հաստատման) աշխատանքներ կատարող փորձագիտական լաբորատորիաները (կենտրոնները) ստանում են այդ պետությունների կազմակերպություններից (ձեռնարկություններից):

Հոդված 4

Կողմերի միջեւ սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով:

Եթե վեճը չի կարգավորվում խորհրդակցություններ ու բանակցություններ անցկացնելու վերաբերյալ վեճի մի Կողմից մյուս Կողմին ուղղված պաշտոնական գրավոր խնդրանքի ներկայացման օրվանից հետո 6 ամսվա ընթացքում, ապա, վեճի կարգավորման միջոցի վերաբերյալ Կողմերի միջեւ այլ պայմանավորվածության բացակայության դեպքում, Կողմերից յուրաքանչյուրը կարող է այդ վեճը հանձնել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հոդված 5

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 6

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու, դրան միանալու եւ դրանից դուրս գալու կարգը սահմանվում է 2007 թվականի հոկտեմբերի 6-ի «Մաքսային միության պայմանագրաիրավական հիմքի ձեւավորմանը միտված միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու եւ դրանց միանալու կարգի մասին» արձանագրությամբ:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2009 թվականի դեկտեմբերի 11-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահպանվում է Մաքսային միության հանձնաժողովում, որը, որպես սույն Համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր Կողմին կտրամադրի իր վավերացված օրինակը:

Բելառուսի
Հանրապետության
Կառավարության կողմից

Ղազախստանի
Հանրապետության
Կառավարության կողմից

Ռուսաստանի
Դաշնության
Կառավարության կողմից